

ՀԱԿՈԲ ՔՅՈՍԵՅԱՆ

Ս. ԱԹԱՆԱՍ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՑՈՒ՝ ՀՈՒՆԱՐԵՆ ԲՆԱԳՐՈՎ ԱՆՀԱՅՏ ԱՆՏԻՈՔԻ ԵԿԵՂԵՑՈՒՆ ՀՂԱԾ ԹՂԹԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տիեզերական Եկեղեցու հայրերի հոգևոր ժառանգության հետազոտումն ու հրապարակումը նպատակ ունի առավել համակողմանիորեն վեր հանելու քրիստոնեական մտքի զարգացման վաղ շրջանը: Մյուս կողմից այդ ժառանգության հայերեն թարգմանության հաշվառումն ու հրապարակումն իր օգտակար նպաստը կարող է բերել ոչ միայն հայ թարգմանական մատենագրության ամբողջացման գործին, այլև ճշտորոշել թարգմանական մատենագրության խաղացած դերը հայ աստվածաբանական գրականության, հայոց լեզվի ուսումնասիրության մարզում: Ի շարս թարգմանական բազում աշխատությունների այդօրինակ կարևոր դեր էր վերապահված նաև Ս. Աթանաս Ալեքսանդրացու (295—373) հրապարակվող ճառի հայերեն թարգմանությանը, որ ամենայն հավանականությամբ կատարվել է Ե դարում: Խնդրո առարկա ճառ-թուղթը ուղղված է Անտիոքի ասորական Եկեղեցու մեջ բույն դրած արիոսյան հերձվածի դեմ, որ հայտնի էր իր դավանած սուբորդինացիոն գաղափարներով: Ըստ այդ հերձվածի, Աստծո Միտքը (Բանը=Որդին) հավիտենակից չէ Հայր Աստծուն, Արարիչ չէ, այլ՝ արարած, հետևաբար՝ ստորադաս Հայր Աստծուն: Իրեն հատուկ աստվածաբանական խորագիտությամբ հեղինակը բառային վերլուծման ճանապարհով ժխտում է հակառակորդների վայրիվերո պնդումները և հիմնավորում հայտնությունից բխող ուղղափառ տեսակետը: Տեսակետ (Որդին մշտնջենավորակից և համագո է Հորը, Քրիստոս կատարյալ Աստված և կատարյալ Մարդ է), որ պետք է Հայ (և ոչ միայն Հայ) Եկեղեցու քրիստոնաբանության կենտրոնական գաղափարը դառնար:

Ճառի հայերեն թարգմանությունը շահեկան է նաև որպես հայոց լեզվի հետազոտման սկզբնաղբյուր: Նրանում կիրարկված **արտաքսատրոհեալ** («Եւ ի ձեռն մտի աւազակին զարտաքսատրոհեալն Ադամա, ելոյծ, այս է՝ զբոլոր աշխարհս՝ յառաջընթաց վասն մեր եղեալ...»), **բարգաձութիւն** («Իսկ արդ, յայտնապէս ապա տունդ մոտ եւ սկիզբն ճանապարհաց արարաւ ի յառաջագրելոց բարգաձութիւն...»), **նուաստիմաց** («...զձայնս նուաստիմացս՝ յԱստուածութիւն Բանին մերձեցուցանելով մոլորիս...») բարդությունները, որոնք բացակայում են Նոր Հայկազյան բառարանում, բաղկացուցիչ միավորներն են հայոց լեզվի հարուստ բառային գանձարանի:

Ճառի հայերեն թարգմանությունը մեզ հայտնի է միակ ընդօրինակությամբ՝ Մաշտոցի անվան Մատենադարանի № 2196 ձեռագրով: Ստորև ներկայացնում ենք ձեռագրի ամփոփ պատկերն ըստ Օ. Եգանյանի նկարագրության. Ձեռագիրը Ժողովածու է: **Վայր՝** անհայտ: **Ժամանակ՝** 1683 թ.: **Թերթ՝** 381: **Նյութ՝** թուղթ, լուսագծերով: **Մեծություն՝** 23×16,2: **Գրություն՝** միասյուն: **Գիր՝** նոտրգիր: **Կազմ՝** դրոշմազարդ, շագանակագույն կաշի, միջուկը՝ տախտակ, աստառը՝ ծածկաթուղթ: **Բովանդակություն՝**

Ա. 6ա—72բ, 342ա—375բ **Ի Քարոզգրոց Գրիգորի Տաթեւացւոյ (Զմեռան հատոր)**

Բ. 72բ—341ա **(Բանք զանազանք)** (14 միավոր)

Գ. 375բ—378բ **(Յաւելագրութիւնք՝ ԺԷ դ.)** (5 միավոր)

Հրապարակվող ճառը զբաղեցնում է ձեռագրի 332բ—341ա թերթերը: Ցավոք այն վերջից թերի է: Վերականգնել ենք ուղղագրության վաղնջական ձևերը՝ ձեռագրիս **օ**-ն փոխարինելով **աւ**-ով, **և**-ը **եւ**-ով:

ՍՐԲՈՅ ԱԹԱՆԱՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏԻ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻՈՅ ԳԻՐ ՅԱՆՏԻՈՔԱՑԻՈՅՆ ԵԿԵՂԵՑԻ ՅԱՂԱԳՍ ԶԱՆԱԶԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԼՈՒԾՄԱՆ ՃԱՌԻՑ, ԶՈՐ ԱՍԱՑԵԱԼ ԷՐ ՅԱՆԴԻՄԱՄԱՐՏԻՑ ԱՍՈՐԻՆ ՀԵՏԵՒՈՂԱՑ ՀԵՐՁՈՒԱԾՈՅ, ԸՍՏ ԻՒՐԵԱՆՑ ՄՏԱՑ

Ամենեքեան, ոյք յԱստուծոյ ի ձեռն բանին Հոգւովն Սրբով ի քարոզութիւն առաքեալ սուրբ մարգարէքն եւ առաքեալքն ոչ վասն հանդերձելոցն լինելոյ եւ ոչ սակս նախեղելոցն լռեալ դադարեցին, այլ հանդերձ ամենայն փութով կատարեցին զհրամայեալ նոցա քարոզութիւն առ ի ոչ սասանել մեզ ի դիւական եւ ստափառն հերձուածոց, քանզի գրեցին ճառս աստուածաշունչս ի Հոգւոյն Սրբոյ, որք կարող հանդիպին առ ի լուսաւորել զայնոսիկ, որք ճշմարտապէսն յուսանելն գայցեն, յորոց զմին մերձաւոր բանիս վկայ հաւատարիմ առցուք զՊետրոս առաքելոցն գլխաւոր՝ զծանուցողն այնոցիկ, որ ի հրէական ժողովրդեանն եղեալ սուտ մարգարէք, որպեսզի մի ոք նոցա սուտ անուանակոչութեամբքն պատրեսցին: Եւ դարձեալ վասն հանդերձեալ ի մեզ սուտ վարդապետաց կանխաւ քարոզեաց, զի յերկաքանչիւրոցն խորամանկն քաղցրաբանութեանց զգուշացեալ ոչ անկցուք ի մերմէ հաստատութենէս, քանզի ասաց Պետրոս ի Կաթուղիկեայսն. «Այսպէս եւ լինէին սուտ մարգարէք ի ժողովրդեանն զորաւրինակ եւ ի ձեզ լինելոց են սուտ վարդապէտք, որք մուծանիցեն ի ներքս հերձուածս կորստեան, եւ զՏէր, որ գնեաց զնոսա, ուրասցին ածելով ի վերայ անձանց զարագահասն կորուստ: Եւ բազումք անկեալք զհետ երթիցեն զեղխութեան

նոցա, որովք ճշմարտութեան ճանապարհն հայհոյեսցի»[1]: Արդ, նոքա, զորոց Պետրոսն յառաջ գրեաց, թէ լինելոց են, յայտնեցան աւասիկ: Սակս որոյ եւ Պաւղոսի համաձայնեալ ասաց. «Գիտեմ, զի յետ իմոյ հրաժարելոյ ելցեն ի ձեզ գայլք ծանունք, ոյք ոչ խնայեսցեն հաւտին: Եւ ի ձէնջ իսկ ինքեա[ն]ցն յարիցեն ոմանք, որք խաւսեսցին թիւրս ձգել զաշակերտսն զկնի իւրեանց»[2]: Վասնզի ամենայն չարահաւատ հերձուած գայլոց ծանունս ունին զիմացողս հերձուածոց եւ զհետեւողս նոցին: Բայց առաւել ապա քան զբոլոր հերձուածոյս [հ]անդուգն եւ անամաւթ ցուցաւ յոչ գոյութենէ ասողացն լինել զԲանն Աստուծոյ կամ թէ՝ էր, յորժամ ոչ էր կամ ստացուած կամ արարած կամ թէ՝ ի Հաւրէ ոչ է եւ ոչ որ ընդ Հաւր Բանն ու Իմաստութիւն, զի ամենայն ահա հարցուածք վրիպեալք առ ինքեանս լռեալ դադարեալ կան: Իսկ որոց յոչգոյութենէն մոլորեալք, որ առ Հայրն ի վեր* ածելոյ ճանապարհի եւ զայլս մոլորեցուցանել ձեռնարկէ: Եւ զոչ հաւանեալս նոցա ձեռնարկէ: Եւ զոչ հաւանեալս նոցա զեղխութեանց զհաւատ[ն] բիւրապատիկ թիւրութեամբ կորզեն զհետ իւրեանց՝ ոչ նմանելով ճշմարիտ Հովուին, որ ի վերայ ոչխարաց զանձն իւր եդեալ, ուստի ի ձեռն սոցա, որպէս Պետրոսն ասաց, ճանապարհն ճշմարտութեան հայհոյի, որ է Քրիստոս, որ ասացն. «Ես եմ ճանապարհ եւ ճշմարտութիւն»[3], որք զՏէրն, որ գնեաց զնոսա արեամբն իւրով ուրացան, զի եթէ Տէր զնա խոստովանէին, ապա եւ ստացող զնա քարոզէին, որպէս եւ է իսկ, այլ ոչ ստացուած կամ արարած, քանզի թողեալ զբնական տէրութեան նորա զպատիւ ծառայակից բոլոր ստացուածոց զնա գոլ վիճին: Քանզի եւ հոգիք եւ հրեշտակք ծառայք են ի սպասաւորութիւն առ ի նմանէ առաքեալք, քանզի ծառայ է ապա արեգական լուսաւորեալ մինչեւ ազատիցին յապականութեան ծառայութենէ: Եւ ջրոց սահման եդ, եւ ոչ անցանէ եւ ի շտեմարանաց հանէ զհողմս, իսկ զամպի ծագաց երկրէ: Եւ զի միանգամայն առնելով ասացից ամենայն ստացուածքս ստեղծողին ինքեանց Աստուծոյ հնազանդեալ կան ի ծառայութեան, զի նովաւ եղեւ ստացեալ ամենայն, որպէս եւ Պաւղոս ասէ, «Եւ նայ է յառաջ քան զամենայն ստացեալ եղեւ բանն, այլ թէ է յառաջ քան զամենայն»: Իսկ արդ, որոց ոչ յայտնապէս իմացեալ զԲանն ստացական զամենեցունց ստացողն յանդգնեալ ասեն եւ փոքր ինչ նուազ ծառայակից ստացականացս որպէս եւ կոչեն զԱստուածն Բանն Ստացող եւ Խնդրող, զի առցէ որպէս եւ մեք իսկ: Արդ, սոքայ են, զորոց կանխաւն ասացի, որոց ուրացեալ զիւրեանցն Տէր Յիսուս Քրիստոս, քանզի յաղագս այլոց ամենեցունց ասէ, թէ նովաւ եղեւ ստացեալ ամենայն, որ ինչ ի վերայ երկրի՝ երեւելի եւ աներեւոյթք, թէ՛ Աթոռք, թէ՛ Պետութիւնք, թէ՛ Տէրութիւնք եւ զամենայն ասացեալ: Եւ «ստացեալ» զնա միայն ասաց գոլ յառաջ քան զամենայն, զի ի հնոյն վարժեալ աստուածայինն Պաւղոս եւ հմուտ գոլով աւրինացն զառակսն Սողոմոնի բանասիրեալ երկու երեսս ի դէմս Տեառն գտեալ մի սակս, որ ի Մարիամայ հանդերձեալ էր առնուլ զմարդն վասն մեր: Եւ միւս դարձեալ, որ յառաջ քան զամենայն յաւիտեանս, մշտնջենաւորապէս ի Հաւրէ ծնեալ Բանին, եւ ապա յաղագս, որ ի Մարիամայն Յիսուսի, գրէր Տիմոթեա՝ ասելով. «Յիշեա զՅիսուս Քրիստոս զյարուցեալն ի մե-

[1] Բ Պետ. Բ 1—2:

* **Ձեռագրում** վերայ. **լուս. ուղղուած (այսուհետեւ զանց ենք առնում** «Ձեռագրում» բառը):

[2] Գործք Ի 30:

[3] Յովհ. ԺԴ 6:

ռելոց ի զաւակէ Դաւթի, ըստ մարմնոյ»[4]: Իսկ յաղագս մշտնջենաւորական ընդ Հաւր Բանին ասաց, թէ՝ էր յառաջ քան զամենայն: Իսկ ապա յանդիմանեալ լիցին այսուհետեւ յամենայն սրբոց, որք ասեն զԲանն Աստուծոյ սկիզբն գործոց լինել ստացեալ եւ լուիցեն Դաւթայ, եթէ ոչ է գործ, այլ գործոց արարիչ ասելով, թէ՝ «Գործք ձեռաց քոց երկինք են, նոքա կորնչին եւ դու մնաս»[5]: Արդ[2*], եթէ երկինք գործք ձեռաց նորա են, յայտ է թէ եւ ամենայն ինչ եւ որ յաղագս անփոխարինելի եւ անայլայլելի Աստուածութեան նորա, որք ասեն զնա փոփոխելի, լուիցեն, զի անփոփոխելի է, որպէս և ասաց Դաւիթ, թէ՝ «Դու նոյն ինքն ես եւ ամք քո ոչ անցանեն»[6]: Եւ դարձեալ Պաւղոս ասէ. «Յիսուս Քրիստոս երեկ եւ այսաւր նոյն Ինքն եւ յաւիտեան»[7]: Եւ ասի ինքն ըստ Փրկչին իմացեալն մարդ, զի սա երբեմն տղայ գոլով, երբեմն «զարգացեալ եւ իմաստութեամբ եւ հասակաւ եւ շնորհաւք սկսեալ որպէս ամաց երեսնից»[8], որպէս Աւետարանիչն Ղուկաս ոչ կարէ նոյն ինքն էլ իսկ «զարգացեալ» եւ զաճումն հասակի ընդունելով եւ մարմինն ստացուած եւ արարած: Եւ զի ստուգագոյն ծանիցուք ոչ էլ զԱստուած Բանն գործ, այլ՝ գործոց արարիչ: Լուր եւ Եզրի[3*] ասելոյն. «Բարձր են երկինք եւ խոր է երկիր եւ երագ արեգակն յընթացս իւր. եւ ի միում աւուր ի տեղի իւր ձգի եւ ամենայն գործք շարժին եւ դողան»[9]: Եւ ո՞ զայս ամենայն արար, եթէ ոչ Ճշմարտութիւն, կենդանի էլ Ճշմարտութիւն եւ յաղթող եւ մնայ յաւիտեանս յաւիտենից, եւ նորայ է յաղթութիւն եւ թագաւորութիւն: Կամեցեալ ապա Տէր ուսուցանել զմեզ, եթէ զոր ասաց Եզրաս Ճշմարտութիւն ինքն է, յորմէ ամենայն գործք շարժին եւ դողան, ասաց. «Ես եմ ճըշմարտութիւն», որպեսզի հասու լիցին, ոյք ընթեռնուցուն զԳիրս, եթէ զոր ասաց ճշմարտութիւն Եզրաս, որոյ զամենայն գործս արարեալ եւ յորմէ ամենայն գործք դողան, է Տէր մեր[4*] Յիսուս Քրիստոս: Իսկ արդ, եթէ «երկինք գործք ձեռաց նորա են», որպէս ասաց Դաւիթ, եւ «ամենայն գործք ի նմանէ շարժին եւ դողան», որպէս Եզրաս ասէ՝ արարչագործ ինքեանց գիտելով: Եւ «ամենայն ինչ նովաւ եղեւ ստացեալս», որպէս եւ Պաւղոս քարոզէ: «Եւ առանց նորա եղեւ եւ ոչ ինչ»[10], որպէս ի Յովհաննէս գոչէ: Ոչ հանդիպի ապա՝ ստացական Աստուածն Բան, զի նովաւ եղեւ ստացեալ ամենայն եւ ոչ արարած, զոր աւրինակ ամենայն իսկ արարածք ի նմանէ դողան եւ ոչ դարձեալ եղական, զոր աւրինակ. «առանց նորա եղեւ եւ ոչ ինչ»: Յանդիմանեալք այսուհետեւ յամենայն սրբոց, որք ասեն ստացական զառ ի Հաւրէ Բանն կամ լռեալ դադարեսցեն յամբարիշտ հայհոյութենէն կամ որպէս զքրիստոսամարտս յամենեցունց ի բաց քարոզեսցին, քանզի յոր բան վստահանայցեն ասացեալն յառակսն. «Տէր ստացաւ զիս սկիզբն ճանապարհաց իւրոց ի գործս իւր»[11]՝ ոտն առեալք լինին: Զի մարգարէանալով Սողոմոն յայն, որ հանդերձեալ էր յաղագս ամենայն աշխարհաց ի փրկութիւն[5*], ի Մարիամայ ստանալով զտէրունեանն մարդ, ասաց յերե-

---

2* Արթ:

3* Էզրի:

4* մեր, մեր:

5* փրկութեան:

4 Հռովմ. Ա 3:

5 Սաղ. ՃԱ 26:

6 Սաղ. ՃԱ 28:

7 Եբր. ԺԳ 8:

8 Ղուկ. Գ 23:

9 Ա Եզր Դ 34:

10 Յովհ. Ա 3:

11 Առակ. Ը 22:

սաց նորա. «Տէր ստացաւ զիս սկիզբն ճանապարհաց իւրոց ի գործս իւր»: Վասնզի զորաւորինակ Դաւիթ նախքան զԻԸ (28) ազգն զհանդերձեալ լինելոց զչարչարանսն Տեառն, որպէս զահայ եղեալ նշանակեաց ասելով. «Ծակեցին զձեռս իմ եւ զոտս իմ»[12] փոխանակ ասելոյն թէ՝ «Ծակեսցին», «Ետուն ինձ կերակուր եւ[6*] լեղի»[13] փոխանակ ասելոյ, թէ՝ «Տացեն»: Եւ որչափ ասէ այսոցիկ համաձայն որպէս «զահայ եղեալ» ծանոյց: Ըստ նոցունց աւրինակի եւ մեծագոչ Եսայիաս յառաջ քան զԻԱ (քսան եւ մեկ) ազգ մինչեւ ցտասն եւ եւթն ազգս նշանակեաց զչարչարանսն Տեառն որպէս «զահա(յ) եղեալ» ասելովն, «որպէս զոչխար ի զեղումն ածաւ»[14] փոխանակ ասելոյ, թէ՝ «Ածցի»: Եւ որպէս յայնժամ մարգարէն Նաւում զչարչարանս եւ զյարութիւն Տեառն գուշակեաց, եւ զհոգի, զոր առաքելոցն հանդերձեալ էր տալ որպէս «զահա[յ] եղեալ» բարբառեցաւ յասելն. «վախճանեցաւ», «մաշեցաւ», «բարձաւ», «ել», որ փչէր յերեսս քո»[15]: Եւ համայն, յորժամ զայս մարգարէացաւ ոչ ինչ յայսցանէ եղեալ էր, բայց յինքենէ, որպէս եղեալ զայսոսիկ քարոզեաց այսպէս եւ առակագիրն[7*] Սողոմոն որպէս ըստ Փրկչին իմացեալ մարդոյ փոխանակ ասելով, թէ «ստանայ զիս» ասաց թէ՝ «ստացաւ զիս»: Արդ, պարտ է եւ զճանապարհն յոր ստացաւ զեկուցանել, քանզի ըստ բազմադիմի աւրինակաց սկիզբն ճանապարհացն երեւի՝ աւրինակ մեզ եղեալ, ըստ ամենայնի մկրտելով, յաղագս մեր խոստովանելով, ըստ մեր փորձելով եւ համբերելով, չարչարելով եւ ոչ սպառնալով, կերակրելով զայն, որ հանդերձեալ էր մատնել զնա, խաչելով եւ ժուժկալելով, զի զհետ երթալով շաւղաց նորա փրկիցուք, որպէս եւ Պետրոս ասաց: Եւ դարձեալ սկիզբն ճանապարհաց ցուցաւ հեթանոսաց՝ յապաշխարութիւն, ամբարտաւանից՝ ի խոնարհամտութիւն, մեռելոց՝ ի յարութիւն կենաց, եւ որոց ի խաւարի՝ լոյս ասելով, ոյք ի կապանս՝ ելէք եւ ոյք ի խաւարի՝ յայտնեցարուք, քանզի սկիզբն ճանապարհաց ձեզ ստացաւ. սպառնացեալ քրովբէին եւ բոցեղէն շուրջանակեալ սրոյն ոչ եւս պահեալ զճանապարհս ծառոյն կենաց զփակեալն սակս յանցանաց Ադամայ՝ արձակ զնա բոլորիցս առնելով, որք հետեւիլ նմա կամիցին, որոց սկիզբն զաւազակն եմոյծ ի ներքս ասելով. «Ամէն ամէն ասեմ քեզ. այսաւր ընդ իս[8*] իցես ի դրախտին»[16]: Եւ ի ձեռն մտի աւազակին զարտաքսատրոհեալն Ադամայ ելոյծ, այս է՝ զբոլոր աշխարհս՝ յառաջընթաց վասն մեր եղեալ՝ մտանելով ի ներքին կողմ վարագուրին, որպէս ասացն Պաւղոս, եւ «սկիզբն եւ անդրանիկ ի մեռելոց եղեալ»[17], եւ առաջին զմարմին յերկինս հանելով՝ ճանապարհ մեզ եղեւ: Վասն որոյ եւ ասէ. «Ես եմ ճանապարհ», որ ածեմ առ Հայրն: Ուստի սակըս նորին ճանապարհի կանխաւ քարոզեաց Երեմիաս ասելովն. «Կացէք ի ճանապարհս եւ հարցէք զշաւղաց Տեառն, եւ ուսարուք, թէ որ են ճանապարհ բարի եւ գնացէք ընդ նա»[18]: Եւ որպէս առ մարգարէականն բանն, բազում ճանապարհք են, յորոց վերայ, ասէ կալ: Եւ զբազում շաւիղս ասէ հարցանել վասն միոյ եւ բարի ճանապարհին, զոր գտեալ ուսցուք գնալ

6* ի:

7* առակադիրն:

8* յիս:

12 Սաղ. ԻԱ 18:
13 Սաղ. ԿԸ 22:
14 Եսայի ԾԳ 7:
15 Նաւում Բ 1:
16 Ղուկ. ԻԳ 43:
17 Կողոս. Ա 18:
18 Երեմիա Զ 16:

ընդ նա: Իսկ արդ, ըստ պատմութեան, ճանապարհք հարցեալք ոչ տան պատասխանի. բայց ըստ ճշմարիտ եւ հոգեւորական մտաց, ճանապարհ եւ շաւիղս զմարգարէսն ասէ հարցանել ի ձեռն ընթերցմանն եւ ի նոցանէ ուսանել զբարի ճանապարհքն, որ է Քրիստոս, եւ նովաւ վարիլ եւ յայտնապէս Տէր եցոյց, թէ ինքն է, զոր ասաց Երեմիաս «ճանապարհ», ասէ. «Ես եմ ճանապարհ եւ կեանք եւ ճշմարտութիւն»[19]: Իսկ արդ, մարգարէից եւ ամենայն սրբոց ճանապարհաց եւ շաւղաց կոչեցելոց սկիզբն արարաւ տէրունեանն մարդ, որ է առաջինն, վասնզի ի սկզբանէ սկսանելն եւ յիշխանութենէ իշխելն: «Արդ, ճշմարտութիւն գիտասցէ ամենայն տունդ Իսրաելի, եթէ Տէր զնա եւ Աւծեալ, որ է Քրիստոս Աստուած արար զայս Յիսուս, զոր դուք խաչեցիք[8*20], զնոյն ինքն զէրունեանն մատն ցոյց արեալ առաքելոցն ասէին. «Զայս Քրիստոս եւ Տէր Աստուած արար զնա»: Իսկ արդ, յայտնապէս ապա տունդ մոտ[9*] եւ սկիզբն ճանապարհաց արարաւ ի յառաջագրելոց բարգաձութիւն եւ սկիզբն ճանապարհաց ունելով, այս է՝ զիշխանութիւն ամենայն սրբոց, զկոչեցելոցն ճանապարհաց եւ Տէր եւ Քրիստոս արարեալ եւ խաչեցեալ: Յաղագս որոյ եւ յԵրեմիաս ասէ ըստ եւթանասուն եւ Բ (երկու) թարգմանչացն[10*] աւանդութեան, «Տէր ստացաւ ի մեզ ի սընկումն փրկութեան նորա, որով փրկութեամբ վարեցին մարդիկ»[21], ըստ Ակիւղասայ, դարձեալ յաղագս նորին բանի այսպէս ասէ. «Ստացաւ Տէր նոր յիգի»: Եւ զոր ասէ փրկութիւն «նոր» մեզ ստացեալ, այլ ոչ հին եւ ոչ յառաջ քան զմեզ: Եւ զոր ասէն՝ «նոր ստացեալ յիգի»՝ ըստ Փրկչին իմայ զմարդն Յիսուս փրկութիւն ստացեալ, եւ որ «յիգի» է ի Մարիամու, մանաւանդ թէ ի Մարիամայ: Արդ, զոր ասացն Սողոմոն. «Սկիզբն ճանապարհաց ստացեալ»[22], եւ զոր Երեմիաս, «Է ստացեալ փրկութիւն նոր» եւ «նոր յիգի», զոր վասն մեր «իմաստութիւն շինեաց իւր տուն»[23] զմարդն Յիսուս Քրիստոս ի Գրոց ցուցեալ, զի ըստ կարգիս տեսցուք յաղագս որոց կամ անգիտացեալ ոմանք եւ կամ յառաջագոյն ընթռնեալք եւ ի մոլորութեան մնացեալք՝ ոչ ուսանելով ուղղակի եւ ոչ ուսանել կամիցին: Իսկ զմեզ այսուհետեւ Տէր կամի, զոր աւրինակ եւ իմաստուն վաճառականն[24] եւ հաւատարիմ հազարապետ աստուածային խորհրդոց[25] եւ տուողս ի ժամու զչափ ցորենոյ կենդանի հացին իջելոյ յերկնից եւ հաստատողի զսիրտս մարդկան, զի որպէս հարքն ի ձեռն աւտարին ծնանելով կերակուր առ իրաքանչիւր հասակ մատուցանել կարասցեն «մինչեւ աճեցեալք ի յայր կատարեալ ի չափ հասակի»[26], որպէս ասաց Եփեսացւոցն Պաւղոս: Իսկ առ Կորնթացիսն գրէ. իւր տակաւին զմարմնաւորս խորհողաց նոցա եւ ոչ եւս զհոգեւորսն տանել կրողաց նոցա, այս է՝ զաստուածային զբանսն ասելով. «Կաթն ջամբեցի ձեզ ի Քրիստոս եւ ոչ կերակուր, քանզի ոչ եւս կարէիք, այլեւ ոչ այժմէն կարող էք»[27], զի կատարելոցն է հաստատուն կերակուր, որոց վասն ի չափն հասանելոյ ճաշակելիքն կիրքդ[11*] են ընտ-

---

9* մոդ:
10* թարքմանչացն:
11* կիրքթ:

19 Յովհ. ԺԴ 6:
20 Գործք Բ 36:
21 Հմմտ. Երեմիա ԼԱ 22:
22 Առակ. Ը 22:
23 Առակ. թ. 1:
24 Տե՛ս Մտթ. ԺԳ 45:
25 Տե՛ս Ա Կորնթ. Դ 1:
26 Եփես. Դ 13:
27 Ա Կորնթ. Գ 2:

թութեան բարո[յ] եւ չարի: Եւ յայլում՝ տեղւոջ ասէ նոյն ինքն Պաւղոս, «Որպէս եւ դայեակ մի զի սնուցանիցէ մանկուն[ս]»[28] իւր այնպէս խնամով՝ տալ ի ձեզ շնորհս ինչ հոգեւորս առ ի հաստատել զսիրտս ձեր, վասնզի թէ ամէնեքին կարող էին տանել հոգեւորապէս զաստուածեղէն բանս ոչ ապա խնամատար եղեալ տայր նոցա հոգեւոր շնորհս եւ ոչ կաթն նոցա ջամբեր, եթէ զհաստատուն կերակուրն ամէնեքին ճաշակել կարէին, այլ տակաւին եւս տղայագունիցն վասն աստուածգիտութեան բանի, ըստ տղայականն աւրինի կաթնասուն առնելով զերախտականն հրամայէ ընդունել բան, այլ ոչ եւս հրեշտականանն կարացեալք կերակրել հացիւ, զոր առ ի մարդն թաքոյց Աստուածն բանիւ: Իսկ առ տկարսն որպէս տկար եղեալ բանջար հրամայէ տալ զպարզագոյնսն ի ձեռն աւր ըստ աւրէն մխիթարութեան առ ի նորոգումն կերակրել բանիւք, քանզի եւ ոյք դառնան առ ամենեցունցն Աստուած ի հեթանոսականն վարուք միայն ամփոփեն[12*] առաքեալքն ի բաց տրոհելով ի զոհելոյ կռոցն եւ ի հեղձուցելոյ[13*] եւ պոռնկութենէ եւ յարենէ եւ ոչ մի ինչ ի հաստատագոյն պատուիրանաց առաջի եդեալ նոցա՝ ոչ սիրել զթշնամիսն, ոչ ոխս հատուցանել չար փոխանակ չարի, ոչ զ[հ]ափըշտակութիւն ընչիցն խնդութեամբ ընդունել, ոչ հարկանողի յաջ ծնաւտն եւ ոչ զձախն մատուցանել որչափ կայ գրեալ Աւետարանսն: Վասնզի ոչ եւս ի չափ հասակի յայր կատարեալ հասին, զի հաստատագոյնիցն հաղորդեսցին կերակրոց: Եւ արդ, պարտ է մեզ այսուհետեւ որպէս հանճարեղ «հազարապետաց աստուածային խորհրդոցն» բաշխել զբանն՝ որչափ իւրաքանչիւր ոք տանել կարող է, քանզի պատառին հնացեալ տիկքն՝ ոչ բառնալով զճշմարտագոյն գինի, այս է՝ զպատգամս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Եւ արդ, վասնզի ոմանք մանաւանդ, թէ բազումք իսկ որք ոչ եւս աշակերտեալք յանդգնութեամբ ուսուցանել մատեան կոչելով հասու ոչ զոր ասենն եւ ոչ յաղագս որոց պնդեալ են՝ կուրացեալ աչաւք մտաց իւրեանց՝ ոչ ունելով միտս տեսող Աստուծոյ, որպէս եւ զԻսրաելն եւ զսիրտս մաքուր զտեսանելին Աստուծոյ, եւ որ յաղագս մարդոյ Փրկչին, զոր վասն մեր զգեցաւ զգրեալ ճառս եւ զգործս խոնարհագոյնս կամ զձայնս նուաստիմացս՝ յԱստուածութիւն Բանին մերձեցուցանելով մոլորին եւ մոլորեցուցանեն զանհաստատս եւ զանուսն՝ խոնարհագոյնս իմն յաղագս Տեառն զմտաւ ածելով հարկ է, որպեսզի Յուդասն գրեաց դնել[14*] առաջի ի ձեռն թղթոյս այսորիկ, թէ ո՞ր բանք Աստուածութեան պատշաճին եւ ո՞ր դարձեալ, որ ըստ Փրկչին իմացեար մարդոյ, զի որպէս ի միում ոսկի եւ արծաթ դահեկանք եդեալ կան զմիոյ թագաւորի պատկեր եւ զվերագիր անուանի իւրաքանչիւր ոք ունելով եւ համայն գիտէ այն, որ պահեն զայն վաճառականն զառաւելութիւն գնոց ոսկոյն քան զնուազութիւն արծաթոյն: Այսպէս ապա թէպէտ եւ ի միում գիրս սակս Աստուածութեան Որդւոյ, եւ վասն, որ ի Մարիամայ յաղագս մեր զգեցաւ մարդոյն գրեալ է, այլ զերկաքանչիւրոց[15*] ի նոցանէ զանազանութիւնս ծանիցուք, որպէս հանճար եղեւ իմաստուն աշակերտք միոյ եւ ճշմարիտ վարդապետին, քանզի որչափ խոնարհագոյն ճառք եւ գործք ի նուաստագոյն մարմինն Յիսուսի գրեալ են յիմացիս, իսկ որչափ դարձեալ հրաշափառ իրք՝ ի Բանին Աստուածութիւն, յորժամ քաղցե-

---

12* անփոփեն:
13* հեղձուածեցելոյ:
14* գնել:
15* զերկաքանչիւրոց:

28 Ա Թեսաղ. Բ 7:

նայ յետ պահելոյն՝ մարմնոյ նուազութիւն: Իսկ յորժամ ի հինգ հացից հինգ հազարս արանց մանկտոյ[16*] եւ կանանց կերակրէ եւ երկոտասան սակաւ աւելուած մնացորդացն հաւաքի[29]՝ Աստուածութեան Բանին գործ: Յորժամ ի վերայ բարձի ննջէ ի նաւին՝ մարմնական հանգստեան է գործ, իսկ յորժամ գնալով ի վերայ ծովուն սաստէ ալեացն եւ հողմոյն ասելով. «Կարկեաց դադարեա»[30], իսկ եւ իսկ լսէ յայնցանէ, որք ի նաւին հանդերձ երդմամբ խոստովանեալ՝ ճշմարտապէս Աստուծոյ [լին]ել Որդի: Յորժամ ի գերեզմանի Ղազարու կացեալ արտասուէ[31] եւ յորժամ չարչարիլն հանդերձեալ, ասէ. «Տրտում է անձն իմ մինչեւ ի մահ»[32], եւ նեղի եւ զՀոգի Աստուածութեան քաջայաւժար ի տնտեսութիւն ասէ: Իսկ մարմինն տկար եւ մարմինս. տկարութիւն է տրտմելն եւ հոգալն: Յորժամ հրամանատրութեամբ ասաց. «Ղազարէ արի. եկ արտաքս»[33], եւ յարեաւ կենդանացեալ չորեքտասներեայ մեռեալն, եւ լուծեալ, որ ոչ երբէք եղեւ ի սկզբանէ արարածոց՝ Աստուածութեան հրաշագործութիւն: Իսկ յորժամ ի ճանապարհորդութենէն, որ յաղագս մարդոյ, «Վաստակեալ նստի ի վերայ աղբերն»[34]՝ մարմնոյ աշխատութիւն էր: Եւ յորժամ ասէ. «Եկայք առ իս ամենայն աշխատեալք եւ բեռնացեալք եւ ես հանգուցից զձեզ»[35]՝ գործ է Աստուածութեան, որ եւ ի մարմնաւոր աշխատութեանց եւ հիւանդութեանց եւ որ ըստ հոգւոյ վտանգք բժշկել: Յորժամ մկրտի ի Յով[հ]աննէ, Որ «մեղս ոչ արար եւ ոչ գտաւ նենգութիւն ի բերան նորա»[36]՝ մարմնոյ նորա, որ յաղագս մարդոյ մաքրութիւն: Իսկ յորժամ հրամայէ առաքելոցն մկրտել զբոլոր ազգս յանուն Հաւր եւ յանուն ինքեան եւ յանուն Հոգւոյն Սրբոյ՝ աստուածայնոյն նորա պատշաճի զաւրութեան: Իսկ ծանր խոնարհեցուցեալ աղաւթէ որպէս զմարդ՝ մարմնոյն, որ յաղագս մեր խոստովանութիւն: Յորժամ ի լերինն փոխակերպեալ նորա եւ անհանդուրժելի եղեալ փառաց նորա Պետրոս եւ Յակոբոս հանդերձ Յովհաննու ահաբեկեալ յերկիր անկանէին՝ փառաց Աստուածութեան Բանին զաւրութիւն: Եւ յորժամ քաջալերեալ վստահացուցանէ զառաքեալսն .ասելով. «Մի երկնչիք յայնցանէ, որ սպանանեն զմարմին եւ զհոգին ոչ կարեն սպանանել»[37]՝ Աստուածութեան է անյայտ եւ հզաւր մխիթարութիւն: Իսկ յորժամ հրաժարէ զմեռանելն՝ մարմնոյ երկիւղ[38]: Վասնզի նախքան զյանցանելն Ադամայ ո՛չ տրտմութիւն, ո՛չ աշխատութիւն, ո՛չ սով, ո՛չ մահ էր, այլ առ նախանձու բանսարկութիւն եմուտ մահ յաշխարհ, որպէս եւ գրեալ է, քանզի պատրեալ Ադամայ ի նմին իսկ բանսարկուէն վրիպեալ ի պատուիրանէ ստեղծողին իւրոյ Աստուծոյ եւ եղեալ ընդ անիծիւք եւ ընդ կապանաւք մահու՝ տեսանելով ստացողի բոլորից Աստուածն բանի եւ հաւանեալ հայրական ակնարկութեան ի համացեղն նորին Ադամայ ի Կուսէն Մարիամա[17*] ստեղծու ինքեան՝ մարմին անարատ կարող հանդիպեալ տանել զամենայն լիութիւն Աստուածութեան մարմնապէս եւ զչարչարանս մարդկեղէնս, զոր յաղագս բոլոր աշխարհի մատնեաց

16* առանց, մանկոյ:

17* Մայրիամա:

29 Տե՛ս Մտթ. ԺԴ 16—20:
30 Մրկ. Դ 39:
31 Տե՛ս Յովհ. ԺԱ 42:
32 Մրկ. ԺԴ 34:
33 Յովհ. ԺԱ 43:
34 Տե՛ս Յովհ. 26:
35 Մտթ. ԺԱ 29:
36 Սաղ. ԼԱ 2:
37 Մտթ. Ժ 28:
38 Տե՛ս Մտթ. ԻԶ 39:

կամաւորութեամբ, որպեսզի զերբեմն թագաւորեալ ի ձեռն մահու զբանաարկուն սպանցէ իւրոյինն մահուամբ մարմնոյ, եւ այնուհետեւ ասասցէ փոխանակ մարդոյ. «Ուր է մահ յաղթութիւն քո, ո՞ւր է մահ խայթոցն քո»[39]: Եւ անդէն կոչեսցէ զբովանդակ զադամային ազգ[18*] ի մահուանէ ի կեանն յաւիտենականն՝ քարոզելով նոցա եւ ասելով. ես եմ փրկելոցն՝ ճանապարհ, մեռելոցն՝ կենդանութիւն, եւ ապաւինելոցն ի ստութիւն՝ ճշմարտութիւն՝ ասելով, որոց ի խաւարի յայտնեցարուք, քանզի «Ես եմ լոյս աշխարհի»[40], վասնզի զգենլով զԱդամ հանդերձ չարչարանաւքն ըստ ամենայնի նման մեզ՝ լինելով բաց[19*] ի մեղաց: Այս է զկոչեցեալն Յիսուս, եւ նովաւ զկորուսեալ ոչխարն գտեալ մատոյց առ Հայր, որ «իբրեւ զոչխար ի զենումն եկեալ եւ որպէս զգառն առաջի կտրչի անմռունչ»[41]: Յաղագս որոյ Պաւղոս գրէ. «Մարդ Յիսուս Քրիստոս, որ ետ զանձն փրկանս փոխանակ մեղաց մերոց»[42]: Եւ ի միւսում տեղւոջ դարձեալ ասէ նոյն ինքն. «Ի ձեռն մարդոյ մահ, ի ձեռն մարդոյ կեանք, զի որպէս Ադամաւ ամենեքեան մեռանին, այսպէս եւ Քրիստոսիւ ամենեքեան կենդանացին»[43]: Եւ դարձեալ յայլում տեղւոջ գրէ ասելով. «Առաջին Ադամն յերկրէ հողեղէն, իսկ երկրորդ Ադամն յերկնից առաջին»[44]. զոր ասէ «մարդ» զնախաստեղծն աշխարհի զեկուցանէ, իսկ «երկրորդ»՝ զըստ Փրկչին իմացեալ մարդ, որ կոչի Որդի մարդոյ. ոչխար, այգի, հաց, ծառ, հատ ցորենոյ, եւ այսոցիկ է նման կոչի եւ Ադամ, թէպէտ եւ յոյժ զանազանութիւն է երկրորդիս, քան զառաջնոյն, քանզի ոմն յերկրէս գոյացաւ: Իսկ միաբան[20*] գոլով Հաւր՝ մարմին եղեւ եւ ոչ թափեալ յելոյն բան: Հայեա այս զգուշութեամբ խորհրդոցդ ի հոգեւորական միտս գրոց մի արտաքուստ կողմանէ, որպէս զմարդկային դիտելով մարմին, ստուերաւ գրոյն վրիպեսցես, քանզի եւ ոչ մարմին իսկ գեղեցկադիտակ արտաքուստ տեսեալ զեկուցանէ զմարդն՝ այլ՝ որ ի նմա աներեւոյթ միտք ի գործոյն ցուցանէ զտեսանելին, թէ է զգաստ, զի թէպէտ եւ գրէ առաքեալ զբանն ասելով. «Որ յարոյց զՅիսուս Քրիստոս եւ զձեզ ընդ Յիսուսի յարուցէ»[45]: Մի ամաւթ վարկանիր ասելով. ոչ կարէր Տէր զիւր ինքեան յարուցանել զմարմինն, եթէ ոչ Հայր զնա յարոյց, քանզի զայս ամենայն ասեն թշնամիքն Տեառն: Արդ, իմա զյարուցեալն ի մեռելոց մա՞րդ էր թէ՞ Աստուած, թարգմանեսցէ[21*] ապա Պետրոս առաքեալ մանաւանդ քան զմեզ հաստ եղեալ, ասելով. «Իջուցեալ ի փայտէն եդին ի գերեզմանի: Այլ Աստուած յարոյց զնա ի մեռելոց»[46]: Իսկ իջուցեալ ի փայտէ զմարմինն Յիսուսի զմեռեալն, զոր եւ պատեալ Յովսեփայ, որ յԱրիմաթեայն, եւ եդեալ ի գերեզմանի, զայն յարոյց Բանն, որ ասէր. «Լուծէք զտաճար զայս եւ յերեք[22*] աւուրս յարուցանեմ զնա»[47]: Վասնզի զայն, որ զամենայն մեռեալս կենդանի առնէ, նոյն եւ զառ ի Մարիամայ մարդն Յիսուս Քրիստոս կենդանացոյց, զոր էառն, զի եթէ ի Խաչին գոլով զյառաջագոյն լուծեալ սըր-

---

18* ասազգ:
19* բայց:
20* միանբան:
21* թարքմանեսցէ:
22* յերկիրս:

39 Ա Կորնթ. ԺԵ 55:
40 Յովհ. Ը 12:
41 Եսայի ԾԳ 7:
42 Ա Տիմոթ. Բ 6:
43 Ա Կորնթ. ԺԵ 21—22:
44 Ա Կորնթ. ԺԵ 47:
45 Բ Կորնթ. Դ 14:
46 Գործք ԺԳ 29:
47 Մտթ. ԻԶ 61, Մրկ. ԺԴ 58, Յովհ. Բ 19:

քոց մարմինն մեռեալս յարոյց, որչափ եւս առաւել կարող էր յարուցանել, զոր զգեցաւ զմարմինն, որ միշտ կենդանի Բանն Աստուծոյ ըստ ասելոյն Պաւղոսի թէ «կենդանի է Բանն Աստուծոյ եւ ազդող եւ հատու»[48] եւ որ ի կարգին է: Արդ, յորժամ ասէ վարդապետն մեր Պաւղոս. «Հայեցարուք ընդ առաքեալն եւ քահանայապետ խոստովանութեան մերոյ Յիսուս Քրիստոս, որ հաւատարիմ է Արարչին իւրոյ»[49]: Մի արարած վարկանիր գոլ, զի սկզբանէ առ Հայր Աստուածն Բան, քանզի ոչ զաներեւոյթ Աստուածութիւն ասէ իմանալ, այլ՝ մարդն տէրունեան, զորմէ ասացն Պաւղոս. միջնորդ Աստուծոյ եւ մարդկան, Մարդ Յիսուս Քրիստոս, որ ետ զանձն փոխանակ փրկանն վասն մեր, զնա ասաց իմանալ զՅիսուս հաւատարիմ Արարչին իւրոյ եղեալ, զոր աւրինակ ասաց եւ Տէր. «Հայեցարուք ընդ ագռաւս, որք ոչ սերմանեն»[50], եւ որ ի կարգին: Եւ դարձեալ. «Հայեցարուք ի շուշանն վայրենի, որպէս աճէ»[51]: Իսկ ապա զերեւելիս ուրեմն ասէ իմանալ, այլ ոչ զհրեշտակս կամ զայլ անտեսանելի արարածս: Զի թէպէտ եւ ասաց Ամբակում մարգարէ. «Հայեցայ ի գործս Քո եւ զարհուրեցայ»[52]: Ի գործս, ասէ, հայեցայ, այլ՝ ոչ ի գործոց Արարիչն: Եւ առաքեալ իսկ ահա զերեւելին Տեառն զմարմինն, ասէ, գիտել, այլ ոչ զաներեւոյթ Բանին Աստուածութիւն, քանզի «զԱստուած ոչ ոք ետես երբէք եւ ոչ տեսանել կարող է»[53]: Եւ զի «Աստուած էր Բանն»[54] եւ է, որպէս ասէ Աստուածաբանն Յովհաննէս[23*]: Իսկ արդ, ընդ որ հայելն լսեմք մարդ Յիսուս Քրիստոս, որ ետ զանձն փոխանակ փրկանն՝ յաղագս մարդ[ոյ] ասաց, եւ առաքեալ, քահանայապետ հաւատարիմ եղեալ Արարչին իւրոյ, զմարդն, որ յաղագս մերն զգեցաւ՝ զարարածս է իմանալ: «Ամենայն ինչ եղեւ ստացեալ», իսկ «ամենայն բանն, ոչ է ստացեալ, որ է Որդի ծնունդ, ըստ բնութեան, վասնզի «զամենայն ինչ Հայր Որդովն ստանայ եւ առնէ», որպէս ասաց Պաւղոս: Եւ դարձեալ Յովհաննէս[24*]. «Ամենայն ինչ նովաւ եղեւ եւ առանց նորա եղեւ եւ ոչ ինչ»[55]: Իսկ զնոյն ինքն զԲանն ոչ ստանայ, այլ ծնանի, քանզի ի ձեռն Բանին ամենայն ինչ եղեւ ստացեալ, ուստի ոչ զինքն ապա եղեալ, այլ զոր վասն մեր զգեցաւ զմարդ եղեալ եւ ստացեալ, զեկուցանեն աստուածաշունչ գիրք: Վասն որոյ յառաջ կոյս ստուգագոյնս պատմեցաք, որպեսզի հարցն ընկալաք, քանզի, զոր ինչ ուսանել կամիմք ի հարցն ուսանիմք, որպէս եւ նոքա յառաջնոցն ուսան: «Մարդ», ապա եւ «Որդի մարդոյ» կոչի, եւ «Ոչխար», եւ «Ադամ» եւ «Քար» եւ «Վէմ» եւ որ չափեաւք եւ կոչի անուամբք ոչ եղեալ բնութեամբ, մի ի կանխագրեալ ծննդականացս, այլ առակաւք վասն[25*] ասաց եւ արար, զի որպէս զՈչխար ի զենումն մատուցեալ՝ զամենայն մոլորեալ հաւտն դարձուցէ, եւ, որպէս զԱյգի պտղաբեր, զանպտուղ եւ զվայրենացեալ այգին, այս է՝ զժողովուրդն, անդրէն այլափոխեալ ածցէ ի պտղաբերութիւն, քանզի ասաց Տէր. «Ամենայն ուր, որ յիս մնա, պտուղ բերէ»[56]: «Եւ զոր զգեցաւ զմարդն, նովիմբ յերկրածինն Ադա-

---

23* Ի Յովհաննէս:
24* Ովհաննէս:
25* **1—2 բառ չգրուած:**

48 Եբր. Դ 12:
49 Եբր. Գ 1:
50 Ղուկ. ԺԲ 24:
51 Մտթ. Զ 28:
52 Ամբ. Ա 5, Գ 16:
53 Յովհ. Ա 18:
54 Յովհ. Ա 1:
55 Յովհ. Ա 3:
56 Յոհվ. ԺԵ 2:

մայ կենդանացուցէ զաղամային ազգ մեռեալ մարմնով եւ կենդանացեալ հոգովն»[57], որ Պետրոսն գրեաց: Տես, զի «մարմնով» զնա «մեռեալ» ասէ յաղագս մեր, այլ ոչ անմահ եւ կենդան[ի] արար Աստուածութեամբն, որպէս ասաց Տէր, թէ՝ «Ես եմ կեանք»[58]: Իսկ ապա կեանք ոչ մեռանի, այլ կենագործէ զմեռեալս, զորաւրինակ լոյս .ի խաւարչտին տեղւոջ ոչ վնասի, այսպէս եւ ոչ կեանք զչարչարանս կրէին՝ այց առնելով մահկանացու բնութեանս, քանզի անփոփոխելի է եւ անայլայլելի է Բանին Աստուածութիւն, որպէս ասաց մարգարէութեամբն Տէր յաղագս իւր ինքեան. «Տեսէք[26*], զիս, զի նոյն եմ ես եւ ոչ փոփոխիմ»[59]: Յիշէ եւ Պաւղոս յաղագս անփոփոխելի Աստուածութեան Քրիստոսի եւ ասէ. «Յիսուս Քրիստոս երեկ եւ այսօր, նոյն ինքն եւ յաւիտեանս»: Արդ, «զերեկն», զոր ասէ, զյառաջ քան զյաւիտեանս զեկուցանէ մշտնջենաւորութիւն, իսկ զայս///

[26*] Տեսէք, տեսէք:

[57] Հմմտ. Ա Պետ. Գ 18:

[58] Յովհ. ԺԱ 25, ԺԴ 6:

[59] Եբր. ԺԳ 8: